

**Տեղեկատվության և
համագործակցության
համար գործող շուրջօրյա
թեժ գիծ՝ (010) 20 60 40**

Երևան 2015

"ՏԱՊ-Ա1" ծրագիր
ԽԱԺ-ի հանրային
իրազեկման թերթիկ



**Օգտակար խորհուրդներ
անասաբույժներին**

**ԻՆՉ ՊԵՏԵ Է ԻՄԱՆԱԿ
ԽՈՉԵՐԻ ԱՖՐԻԿԱԿԱՆ ԺԱՆՏԱԽՏԻ
(ԽԱԺ) ՄԱՍԻՆ**

✓ **Իրականացնել՝**

- Համաճարակաբանական հետազոտություն, որը կնկարագրի հիվանդության բնական աղբյուրները և բնութագիրը,
- Հանրային իրազեկում ֆերմերների, որսորդների և անտառային կառավարիչների շրջանում,
- Հակահամաճարակային միջոցառումներ վարակի օջախում:

✓ **Հետևել՝** կենսաանվտանգության միջոցառումների պատշաճ կատարմանը:

✓ **Հսկողություն սահմանել՝** խոզերի տեղաշարժի նկատմամբ, ինչպես վարակի օջախում և հարակից սահմաններում:

✓ **Աջակցել՝** անհրաժեշտ պահանջագրերի կազմման և ներկայացման գործում:

- ❑ **ԽԱԺ-ը առաջացնում է ծանր կորուստներ և ահռելի տնտեսական վնաս է պատճառում ֆերմերներին և գյուղացիական տնտեսություններին:**
- ❑ **Բարձր հպավարակային և հաճախ բոլոր հասակի խոզերի անկումներով ընթացող հիվանդություն է:**
- ❑ **Բացասական ազդեցություն ունի խոզի մսի արտադրության և իրացման վրա և կարող է հանդիսանալ համաշխարհային պարենային անվտանգության սպառնալիք:**



"ՏԱՊ-Ա1" ծրագիր
ԽԱԺ-ի հանրային իրազեկման տեղեկատվական թերթիկ անասաբույժների համար

Որո՞նք են խոզերի մոտ հաճախ նկատվող հիմնական նշանները

- ❑ Բարձր ջերմաստիճանը /մինչև 42°C/,
- ❑ Ընդհանուր թուլություն և կոորդինացիայի խախտումը,
- ❑ Արյունահոսություն բոլոր բնական անցքերից:
- ❑ Անկումներ 1-5-րդ օրը,
- ❑ Ականջների և մարմնի տարբեր հատվածներում կապտությունը:



Որո՞նք են հանդիսանում րնկայունակ կենդանիներ

- ❑ Ընտանի և վայրի խոզերը:

Ո՞ր փոխանցողը կարող է նպաստել հիվանդության հարուցչի տարածմանը

- ❑ Ornithodoros տեսակի տզերը:
 - ✓ Վարակված տարածքներում ԽԱԺ-ի առկայության համար կարևոր ռիսկի գործոն է

Ինչպե՞ս է փոխանցվում հիվանդությունը

- ❑ Ուղիղ բերան – քիթ փոխանցմամբ:
- ❑ Վարակված աղբից:
- ❑ Ախտահարված պարագաների միջոցով:
- ❑ Վարակված տզերի կծելուց:
- ❑ Մեխանիկական ճանների կամ մոծակների խայթոցից, ինչպես նաև թռչունների, կրծողների և միջատների միջոցով:

Կարո՞ղ է մարդը հիվանդանալ ԽԱԺ-ով

- ❑ Ոչ:

Որո՞նք են ֆերմերային տնտեսություններում հիվանդությունների տարածման հիմնական ռիսկի գործոնները

- ❑ Ցածր կենսաանվտանգությունը:
- ❑ Վայրի խոզերի հետ շփումը:
- ❑ Ընտանի կենդանիների շփումը աղբանոցներ:



Որո՞նք են ֆերմայում ԽԱԺ-ի տարածմանը նպաստող հիմնական գործոնները

- ❑ Արյան մեջ առկա ախտածնի շատ մեծ չափաքանակը,
- ❑ Հարուցչի բարձր կայունությունը շրջակա միջավայրում.
 - ❖ հողում մինչև 180 օր,
 - ❖ մուկ 5- 6 ամիս
 - ❖ կղանքում մինչև 160 օր,
 - ❖ մեզի մեջ՝ 60 օր:
 - ❖ դիակներում 17 օրից մինչև 10 շաբաթ:

Որո՞նք են վարակի հիմնական աղբյուրները.

- ❑ Հիվանդ, վիրուսակիր ու անկած կենդանիները և նրանց արտազատուկները՝
 - ❖ քթից,
 - ❖ թքից,
 - ❖ կղանքից, մեզից,
 - ❖ ակնային հատվածից,
 - ❖ արյունից և արյունահոսած գանգվածը բնական անցքերից:
- ❑ ԽԱԺ-ով ախտահարված պարագաները և կերերը:
- ❑ ԽԱԺ-ով ախտահարված մսեղիքը և մսամթերքը:

ԽԱԺ-ի կանխարգելումը և պայքարի միջոցառումները

Ինչպե՞ս կանխել հիվանդության թափանցումը խոզաբուծական ֆերմա

- ✓ **Սահմանել՝** խոզաբուծության վերահսկողություն վարակի օջախի շրջապատում գտնվող անասնագոմերի, ֆերմաների, տնային տնտեսությունների ելքերի և մուտքերի մոտ:
- ✓ **Թույլատրել՝** ֆերմա անձանց մուտքը միայն արտահագուստով և յուրաքանչյուր անգամ **փոխել՝** արտահագուստը և կոշիկները, ինչպես նաև այլ անհատական պաշտպանիչ պարագաները մի տնտեսությունից մյուսն այցելելուց առաջ:
- ✓ **Օգտագործել՝** վարակազերծված գործիքներ մի տնտեսությունից մյուսն այցելելուց առաջ:
- ✓ **Աջակցել՝** ախտահանելու վարակված տարածքները, **տեղադրել՝** ֆերմայի մուտքի/ելքի մոտ ախտահանիչ գորգեր:
- ✓ **Սահմանափակել՝** ֆերմա մտնող և դուրս եկող մեքենաների շարժը, ինչպես նաև ախտահարված մթերքների և կերի փոխադրումը և յուրաքանչյուր անգամ **ախտահանել, վարակազերծել:**
- ✓ **Արգելել՝** խոզերի և խոզի մսեղիքի արտադրանքի, վարակված խոզերի, անկած դիերի և նրանց հետ շփման մեջ առարկաների տեղաշարժը տնտեսությունից կամ բնական օջախներից դուրս առանց անասնաբուժական հսկողության, ինչպես նաև կենդանի խոզերի, խոզի մսի և մսամթերքի առքն ու վաճառքը կամ սատկած հում մսեղիքի օգտագործումը այլ խոզերի կերակրման համար:

*ԽԱԺ-ի դեպքում խոզերի բուժում չի իրականացվում
իսկ վարակված բոլոր խոզերին ենթարկում են
անարյուն եղանակով ոչնչացմանը:*

ԽԱԺ հիվանդության բնութագիրը

- ✓ ԴՆԹ պարունակող վիրուս է:
- ✓ Առկա է միայն մեկ շճաբանական տիպ, սակայն կան ավելի քան 20 գենոտիպեր:
- ✓ Հայաստանում տարածված է գենոտիպ II-ով, որը Մոզամբիկից եկած բարձր վիրուլենտության գենոտիպ է և առաջին անգամ հայտնաբերվել է 1998 թվականին:
- ✓ ԽԱԺ արձանագրվել է 2007 և 2011 թթ. Հայաստանի Հանրապետության մի շարք մարզերում:

ԽԱԺ-ի վիրուսի գոյատևման չորս պայմանները

- ✓ Բնական վիրուսակիրներում աֆրիկական վայրի խոզեր,
- ✓ Օրնիթոդորուս տեսակի տզերում,
- ✓ Սպիտակուցային միջավայրերում, հատկապես խոզի սառեցրած կամ ջերմային պատշաճ մշակման չենթարկված խոզի մսից պատրաստված մթերքներում /օրինակ՝ չորացված, աղացած կամ ապխտած մթերքները, ինչպես նաև խոզի առնվազն մի քանի ամիս չվերամշակված գոմաղբում,
- ✓ Ընկալունակ խոզեր /ընտանի և վայրի/:

ԽԱԺ-ի վիրուսը միշտ փոխանցվում է ուղղակիորեն և հիվանդության առաջացման համար վիրուսի մեծ քանակություն է անհրաժեշտ:

ԽԱԺ-ի ախտածնությունը և իմունոլոգիան

Մարմնի ո՞ր բջիջները կարող են ախտահարվել ԽԱԺ-ով

- ✓ Մոնոցիտներ և մակրոֆագեր, ինչպես նաև ավշային հանգույցի բջիջներ:

Որքա՞ն է հիվանդության ինկուբացիոն շրջանը

- ✓ 2-22 օր

Կլինիկապես վերականգնված վարակված կենդանին որքա՞ն ժամանակ կարող է համարվել վիրուսակիր

- ✓ Մինչև 6 ամիս


Հիվանդության քանի՞ տարբեր կլինիկական ընթացքներ գոյություն ունեն

- ✓ Գերսուր, սուր, ենթասուր և քրոնիկ



Տարբերակիչ ախտորոշման համար ինչպիսի՞ ալ վարակիչ հիվանդություններ պետք է դիտարկվեն

- ✓ Խոզերի դասական ժանտախտ,




- ✓ Բարձր ախտածին խոզերի շնչառական և վերարտադրողական համախտանիշ
- ✓ Խոզերի դերմատիտի և նեֆրոպատիայի սինդրոմ
- ✓ Խոզերի կարմրախտ
- ✓ Սալմոնելյոզ /սեպտիկ/
- ✓ Համատարած սեպտիկ կամ հեմոռագիկ վիճակի ցանկացած դեպք:

Նմուշների կառավարումը

Ի՞նչ է անհրաժեշտ նմուշառման համար

- ✓ Արյուն
- ✓ Օրգաններ /փայծաղ, երիկամներ, նշագեղձեր, գլխի ավշային հանգույցներ/



Նմուշներ

- ✓ Բոլոր նմուշները պետք է պիտակավորվեն և նրանց կցվեն տվյալներ նմուշների ծագման մասին:
- ✓ Ավշային հանգույցները, փայծաղը և նշագեղձերը պետք է նմուշառվեն ասեպտիկ պայմաններում, առանձին և պահվեն սառնարանային պայմաններում /բայց ոչ երբեք սառցարանային/: Թոքերը, լյարդը, երիկամները և ուղեղը կարելի է պահել 10%-ոց ֆորմալինում: Ասեպտիկ վերցրված արյան նմուշները կարող են պարունակել հակակոագուլյաստներ:
- ✓ **Տեղափոխել** բոլոր նմուշները հերմետիկ փակվող ախտահարված առանձին տարաներում:

Ախտահանիչներ

- 2%-ոց կծու նատրիում,
- 1,5 %-ոց ֆորմալդեհիդ,
- 1,5 %-ոց պարաֆորմ:
- Վիրկոնի, Դեքսիդի, Բիանոլի լուծույթներ,
- Նատրիումի կամ կալցիումի հիդրոքլորիդ /2-3% ակտիվ քլոր պարունակությամբ/ և յոդ պարունակող նյութեր:

